

# ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆՈՒԹՅԱՆ «ՄԵԼԱԿԱՐՏ»

ԳԴՌ-ի նախաշինություն մեջ սկսել են կիրառել մասնաձև կարծր թղթից պատրաստված մի նոր նյութ՝ «մեթակարո», որի արտադրությունը յուրացվել է Շպրինգերի «Պրեսս շտոֆվերկ» գործարանում:

Մեթակարոն կիրառվում է բուֆետային, խոհանոցային, լաբորատորական և այլ սեղանների վրաքաշի, սառույցի պահեստների և սառույց պատրաստող մեքենաների ծածկի, տրամվայների, մարդատար, սպորտային ու բեռնատար նավերի, ինքնաթիռների, սանիտարական շենքերի, նախասրահների, ֆոյեների պատերը, ինչպես նաև տարբեր ցուցատախտակներ և ցուցիչներ երեսպատելու համար:

Մեթակարոյի հատկությունները՝ ջերմաստիճանային դիմացկունություն մինչև 120°C, երկարատև ջերմակայունություն +100°C-ում, դժվար է բոցավառվում, չի փչանում վառվող սիգարետներից, կայուն է ծովի ջրի ներգործության և մթնոլորտային ազդեցությունների նկատմամբ, չունի համ ու հոտ, ունի մակերևութների բարձր ամրություն, լավ կայուն է լույսի ներգործության նկատմամբ, օժտված է լավ փայլուն կամ փայլատ մակերևութով, կայուն է յուղերի, ճարպի, բենզոլի, թթուների, ալկոհոլի և այլ նյութերի ներգործության հանդեպ, հեշտ է լվացվում ու ախտահանվում, հեշտ է մշակման ենթարկվում:

Մեթակարոն հեշտությամբ կարելի է տալ ցանկացած գույնը, երանգը, նկարը, նմանեցնել փայտի տարբեր տեսակների:

Տեսակարար կշիռն է 1,4:

Ձգման դիմադրությունը. մինչև 3 մմ հաստությունների դեպքում՝ 1200 կգ/սմ<sup>2</sup>, 3 մմ-ից բարձր հաստությունների դեպքում՝ 1500 կգ/սմ<sup>2</sup>:

Հալման ժամանակը ամրությունը.

Մինչև 3 մմ հաստությունների դեպքում՝ 8 կգ/սմ<sup>2</sup>, 3 մմ-ից բարձր հաստությունների դեպքում՝ 10 կգ/սմ<sup>2</sup>:

Մեթակարոն հեշտ է կտրվում սղոցով, ֆրեզով, մշակվում խարտոցով, կալում սոսնձով:

Նրա թերթերը կայուն են մեթանոլի, էթանոլի, ացետոնի, քացախի էսենցիայի, բուտիլ-ացետատի, քլորոֆորմի, դադոլինի, բենզոլի, տոլուոլի, ֆենոլի և այլ քիմիական ռեակտիվների ներգործության դեպքում:

Մեթակարոյի կայունությունը ստուգվել է մի շարք թթուների ու ալկալիների ներգործության հանդեպ զանազան կոնցենտրացիաների ժամանակ:

Մեթակարոյի մշակման համար գործադրում

Մեթակարոյի փորձարկման աղյուսակը

| Թթու, ալկալի | Կոնցենտրացիա | Ջերմաստիճան                                |
|--------------|--------------|--------------------------------------------|
| Աղաթթու      | 36%          | 20—100°C                                   |
| Քացախաթթու   | 7,5%         | 20—100°C                                   |
| Ազոտաթթու    | 30%          | 20—100°C                                   |
| Ֆոսֆորաթթու  | 20%          | 20—100°C<br>(ինո՞ւմ են առանձին ճաբվածքներ) |
| Քացախաթթու   | 95%          | 20—100°C<br>20—100°C                       |
| Ալկալի       | 10%          | (փոքր վնասվածքներ)                         |

ին այն նույն գործիքները, ինչ որ պողպատի մշակման համար:

Սկավառակավոր սղոցներ՝ 200—250 մմ տրամագծով, սկավառակների հաստությունը 1—2 մմ է, ատամների քայլը՝ 3—4 մմ, մեկ րոպեում՝ 2000—3000 պտույտ:

Սպիրալաձև գայլիկոններ, որոնք ունեն 6—8° բարձրացում, 60—80° սրվածքի անկյուն, 6—8° ևզրի ետևի անկյուն, 60—80 մ/վրկ կտրման արագություն, մեկ պտույտի ընթացքում՝ 0,3—0,4 մմ մաստուցում:

Հղկումն ու տղորկումը կատարվում են զանազան մեթոդներով (օրինակ, հղկումը՝ հղկաթըղթեր տնեցող պտույտով սկավառակներով, ողորկումը՝ զանազան պաստանների, ֆլանեյների կիրառությամբ, նախած պահանջներին ու մակերևութային թնկին):

Մեթակարոյի թերթերի ֆաներացումը կատար-



վում է փայտի զանազան տեսակներով, էկացելով, գլակրոդիտով և այլ պլաստմասսաներով: Շատ դեպքերում մեխակարտն օգտագործվում է առանց ֆաներացման, սպիտակ, դարչնագույն, սև, բաց դեղնավուն, դեղին, կապույտ, կարմիր, կանաչ, փղոսկրի և այլ զանազան գույներով ներկած, ողորկված մակերևութներով:

Մեխակարտը մատակարարվում է  $750 \times 900$  մմ-ից մինչև  $1000 \times 1050$  մմ չափերի ու  $1-1,5$ ,  $2,0-2,5-3,0$  մմ հաստությամբ թերթերով: Առանձին պատվերներով պատրաստվում են  $0,7-90$  մմ հաստությամբ թերթեր:

Թողարկվում են մեխակարտի զանազան ստրուկեր՝ հատուկ նշանակության միագույն թերթեր, դեկորատիվ և դրվագման նպատակների համար մեկ կողմը ներկած թերթեր, փորագրության համար բաղամագույն, բաղմաշերտ թիթեղներ, երկու կողմից գունավոր թիթեղներ՝ գունավոր գրենական պիտուլքների երեսպատման և այլ կարիքների համար:

Մեխակարտը թողարկվում է նաև թիթեղների ձևով, որոնք կապվում են թեթև մետաղների թերթերի վրա:

Նավաշինական նպատակներով այժմ յուրացվում է  $1,2 \times 2,8$  մ չափի մեխակարտի թերթերի թողարկումը: Դրանց մատակարարումը նախատեսվում է կատարել 1958 թվականի կեսերին:

Մեխակարտի արժեքը բարձր է, սակայն չի փերազանցում արևմտագերմանական համաձայն նյութերի գնից:

## ՊԼԱՍՏՄԱՍՍԱՆԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արևմտամեյրոպական «Ինդուստրիկուրի» թերթի տեխնիկական հավելվածում հրապարակվել է մի հոդված՝ շինարարության մեջ պլաստմասսաներ կիրառելու մասին:

Պլաստմասսաները, ասված է հոդվածում, ավելի հաստատուն տեղ են գրավում շինարարության մեջ: Դրանք լայնորեն կիրառվում են շենքերի ներքին զարգացման, կահույքի արտադրության ժամանակ և այլն: Պոլիմիլիթացնողից ու պոլիմիլիթրոդից պատրաստված արհեստական նյութերը և արհեստական խեփից ու ապեխտից պատրաստված սալերը կիրառվում են

հատակները զարդարելու համար: Պլաստմասսաները ծառայում են իբրև լավ դեկորատիվ նյութ:

Պոլիմիլիթրոդի ծածկումները իրենց բարձր ամրության շնորհիվ կիրառություն են գտնում հասարակական շենքերում, խանութներում և արդյունաբերական ձեռնարկություններում: Բազմազան պրոֆիլն ու գույնը լայն հնարավորություններ են բացում դրանք բնակարանային շինարարության մեջ օգտագործելու համար:

Շինարարության մեջ լայն տարածում են ըստացել փրփրանյութերը: Դրանց մեջ առաջատար տեղ են գրավում պոլիստիրոլից պատրաստված փրփրանյութերը: Ունենալով աննշան ծավալային կշիռ ( $15-20$  կգ/մ<sup>3</sup>), նրանք օժտված են բարձր ամրությամբ:

Շինարարության մեջ նրանք  $6-20$  սմ հաստությամբ սալերի ձևով օգտագործվում են ձայնամեկուսացման համար: Պոլիստիրոլից պատրաստված փրփրանյութերը լայնորեն կիրառվում են նաև սառնարաններում, որպես մեկուսիչ նյութ և այլն:

Հետաքրքիր կիրառություն են գտել միզանյութա-ֆորմալդեհիդի խեփից պատրաստված փրփրանյութերը: Կառուցվել են շարժական տեղակայումներ, որոնք թույլ են տալիս այդպիսի նյութեր արտադրել անմիջականորեն շինարարության վայրում: Նրանք, որպես կանոն, օգտագործվում են հիդրոէլեկտրակայաններում, իբրև մեկուսիչ փրփրանյութեր՝ պատերի միջով կաբելային գծեր անցկացնելիս և միջհարկային վերնածածկերի հիդրոմեկուսացման համար:

Այս նյութը կիրառվում է ջրմուղի և ջեռուցման խողովակներ անցկացնելիս և օդափոխիչ սիստեմներում այն կարելի է օգտագործել նաև ձայնամեկուսացման համար:

(Информационный бюллетень Калининского СНХ, № 5—6, 1948 г.)


## ԱՌԱՆՅ ԱՆՐԻԿԻ ԿԱՊԻՃ

Ակոսված կենտրոններում դետալները մշակելուց հետո կենտրոնադրման անցքերը անպետք են դառնում հետագա մշակման համար:

Առանց անրիկի նոր կապիձը (бесповодковый патрон) վերացնում է այդ թերությունները (տե՛ս նկարը): Կապիձի (4) իրանը ներքին պարուրա-



կով հագցվում է հաստոցի իլին, իսկ վռանը (5) իր արտաքին կոնուսով նստում է իլի ներքին կոնի մեջ: Կապիճը տեղադրելուց առաջ կենտրոնի (2) պեղմման ճիգը, որ ստեղծվում է զրս-



Նկ. 1.

սանակի (6) միջոցով, կտպիտ կերպով կարգավորվում է պնդողակով (7) և վերջնականապես պտւտակով (8):

Դետալը տեղադրվում է կենտրոններում և

սեղմվում է հետևի կոճղակով: Կենտրոնը մի քիչ հտ է գնում, և դետալը իր ճակատամասով սեղմվում է երեք հենակային (упорные) դանակների (1), ընդ որում հենման տափօղակը (3) դանակների հետ միասին, իր գնդային մակերևույթով ինքնատեղադրվում է իրանի գնդային մակերևույթի վրայով: Այդ ինքնատեղադրումը կարևոր է նրանով, որ նույնիսկ կենտրոնների առանցքի նկատմամբ մշակվող դետալի ճակատամասի տնտղահալացությունը դեպքում էլ հենակային դանակները, այնուամենայնիվ, տեղադրվում են դետալի ճակատամասով:

Ինչպես երևում է կապիճի կոնստրուկցիայից, կապիճի մեջ դետալի կենտրոնադրման անցքերը չեն փչանում և պիտանի են մնում կենտրոններում հետագա մշակման համար: Կապիճի սեղմող ճիգը կախված է մշակվող առարկայի տրամագծից:

(«Машиностроитель», № 9. 1957 г.  
Արտատպված է «Fertigungs technik» ժուռնալից,  
№ 1, 1957, էջ 34):